ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1959 Общественные науки

Հ. Ու. Մելիքսեթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի Օգնության Կոմիտեի գործունեության ուսումնասիրությունը պատմագիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում։

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և դաշնակների տիրապետությունը լիակատար քայքայման էին հասցրել Հայաստանը։ Ավելի քան 200 հազար բնավեր արևմտահայեր, առանց նյութական ապահովության ու հիմնական օթևանի, գտնվում էին նախկին Երևանյան նահանգում։ Երկրով մեկ ցրված էին հազարավոր որբ ու անապաստան երեխաներ։ Ամենուրեք մոլեգնում էր սովն ու համաճարակը։ Հայ ժողովուրդը ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ էր գտնվում, երբ 1920 թ. նոյեմբերին հաղթանակած Սովետական իշխանությունը բացեց նրա փրկության միակ ճանապարհը։

Սակայն սովետական կարգերի հաստատումից կարճ ժամանակ հետո՝ երկրին նորանոր ավերածություններ ու աղետներ պատճառեց դաշնակների փետրվարյան ավանտյուրան։

1921 թ. Հայաստանում բռնկված երաշտի հետևանքով էլ ավելի ահռելի չափեր ընդունեց սովը։ Արդեն 1922 թ. սկզբներին այն ընդգրկել էր համարյա բոլոր գավառները. Ալեքսանդրապոլի գավառում սովի ճիրաններում էին գտնվում 37 հազ., Նոր Բայազետում՝ 38 հազ., Դարալագյազում՝ 12 հազ., Վարդիլիսայում՝ 15 հազ., Լոռում՝ 6 հազ., Մեղրիում՝ 3 հազ., Էջմիածնում՝ 30 հազ. մարդ։ Օրեցօր աճում էր սովյալների թիվը Երևանում, Բասարգեչարում և այլուր[1]։

Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, հայ ժողովրդի գործադրած հերոսական ջանքերի շնորհիվ 1921 թ. ապրիլի 2-ին լիկվիդացվեց դաշնակների 45-օրյա արյունոտ դիկտատուրան, իսկ հուլիսի կեսերին Սովետական Հայաստանի ամբողջ տերիտորիայից ընդմիշտ դուրս վռնդվեցին նրանց վերջին մնացորդները։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի և կառավարության առջև ծառացած տնտեսական լուրջ դժվարությունների հաղթահարման գործում հսկայական նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս ռեսպուբլիկաների բազմակողմանի օգնությունը։ Սովետական Ռուսաստանը, չնայած իր տնտեսական ծանր դրությանը, դեռևս 1920 թ. դեկտեմբերին Հայաստանին տրամադրում է 600.000 ռուբլի՝ ոսկու կուրսով։ Այնուհետև մինչև 1922 թ. սկզբները, ոչ լրիվ տվյալներով, ուղարկվում է 1 միլիոն 545 հազ.

---

[1] *Տես՝ Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի կենտրոնական Պետական արխիվ (հետագայում նշվում է՝ ՀՍՍՌ ՀՌԿՊԱ), ֆ. 178, գ. 1240, թ. 105։*

ռուբլի դրամ, 426 հազ. փութ հացահատիկ և այլուր, 70 հազ. փութ ձկնեղեն, 11 հազ. փութ աղ, 7000 փութ շաքար, 150 փութ կակաո, 12 վագոն դեղորայք, 1.177.000 փութ վառելիք, 1,5 միլիոն արշին մանուֆակտուրա, 100.000 ռուբլու գալանտերեայի ապրանքներ, 18.000 կոմպլեկտ զինվորական համազգեստ, 36.000 զույգ սպիտակեղեն, 1500 գլուխ անասուն (մեծ մասամբ ձիեր), 10 օդանավ, նույնքան էլ ավտոմեքենաներ, մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ, տպարանական սարքավորում, հեռագրական և հեռախոսային ապարատներ և այլն։ Սովետական Ուկրաինայից 1922 թ. հունվարին Հայաստանն ստացել է 12 վագոն գարի, 19 վագոն հաճար, 14 վագոն արինճ (հնդկացորեն), 7 վագոն վարսակ և այլ մթերքներ, իսկ Ադրբեջանից՝ մեծ քանակությամբ վառելիք[2]։

Ակնհայտ է, որ Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս ռեսպուբլիկաների համակողմանի օգնությունը վճռական դեր խաղաց հայ ժողովրդի համար ճակատագրական այդ օրերին և նրան հնարավորություն տվեց դուրս գալ տնտեսական դժվարին վիճակից ու վստահորեն ընթանալ սոցիալիզմի կառուցման ուղիով։

Սակայն հայ ժողովրդի միայն մի մասին հաջողվեց իր բախտը կապել սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի հետ, մինչդեռ թուրք ջարդարարների սարքած արյունալի սպանդից մի կերպ փրկված հարյուր հազարավոր հայ աշխատավորներ ցրված էին աշխարհով մեկ և գտնվում էին անհուսալի վիճակում։

Կոմունիստական պարտիան, Սովետական կառավարությունը և Սովետական իշխանության շնորհիվ հայ ժողովրդի ազգային վերածնունդի ուղին բռնած հատվածը չէին կարող անտարբեր մնալ սփյուռքահայ աշխատավորների ճակատագրի նկատմամբ։ Անհրաժեշտ էր նրանց շրջանում սիստեմատիկ աշխատանք ծավալել ու հետու պահել ազգայնական-բուրժուական պարտիաների նոր ավանտյուրաներին հետևելուց, կապել Սովետական Հայաստանի հետ և համախմբել նրա շուրջը։ Սփյուռքահայ աշխատավորների համար այդպիսի դեր կատարեց Հայաստանի Օգնության Կոմիտեն։

Հայաստանի Օգնության Կոմիտեի, ավելի ճիշտ համանման մի կազմակերպության ստեղծման գաղափարը պատկանում է մեր ժողովրդի բախտով խորապես շահագրգռված մի խումբ մտավորականների, որոնց հայրենասիրական նախաձեռնությունը ջերմ հավանություն ու աջակցություն գտավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ղեկավարության կողմից։ ՀՕԿ-ի հիմնադիր անդամներն են եղել պետական ու հասարակական ականավոր գործիչներ՝ Ս. Կասյանը, Ս. Տեր-Գարրիելյանը, Ս. Համբարձումյանը, Ա. Բեկզադյանը, Գ. Շահվերդյանը, Ա. Մելիքյանը, Ա. Կախոյանը, Ս. Մարտիկյանը, Ա. Կարինյանը, մեր մտավորականության լավագույն ներկայացուցիչներ՝ Հովհաննես Թումանյանը, Նար-Դոսը, Դերենիկ Դեմիրճյանը, Եղիշե Թադևոսյանը, Ռոմանոս Մելիքյանը, Հակոբ Մանանդյանը, Ստեփան Մալխասյանը, Լեոն, Վահան Արծրունին, Մանուկ Աբեղյանը, Գրիգոր Զուրարյանը, Մարտիրոս Սարյանը և ուրիշներ։ Նրա հիմնադիրները սկզբում նպատակ էին դրել ՀՕԿ-ի միջոցով, մի կողմից՝ Սովետական կառավարության շուրջը համախմբել ու շինարար աշխատանքի ներգրավել հայ մտավո-

[2] Տես՝ „Восстановление народного хозяйства Армянской ССР" (сборник материалов и документов). Ереван. 1958. стр. 91—100.

բականության կենսունակ այն ուժերին, որոնք պանպան պատճառներով հեռու էին կանգնել երկրում կատարվող վերափոխություններից, ինչպես նաև պրոպագանդայի բազմապան միջոցներով ցրել Սովետական իշխանության շուրջը թշնամիների կողմից տարածվող զրպարտությունների ու ստահոդ լուրերի շնորհիվ ստեղծված անվստահության մթնոլորտը սփյուռքահայ աշխատավորության մեջ, իսկ մյուս կողմից՝ հնարավորության սահմաններում օգնել Սովետական կառավարությանը անցյալի չարաղետ հետևանքների դեմ մղվող պայքարում։

Անհրաժեշտ է միաժամանակ ընդգծել, որ ՀՕԿ-ի հիմնադիրները դրսից առանձնապես նյութական սպասելիքներ չունեին։ Նրանց համար առավել կարևոր էր ՀՕԿ-ի միջոցով հայկական գաղթավայրերում տարվելիք աշխատանքը, աշխատանք, որի շնորհիվ հնարավոր կլիներ թուրքական արյունոտ յաթաղանից մի կերպ ազատված ու աշխարհով մեկ ցրված արևմտահայությանը հանել ազգայնական-բուրժուական պարտիաների ազդեցությունից և նրան դիմադարձնել դեպի Սովետական Հայաստան։

Շնորհիվ Սովետական Ռուսաստանի ու եղբայրական մյուս ռեսպուբլիկաների օգնության, արագորեն լիկվիդացվեցին Հայաստանի տնտեսական դժվարությունները, ուստի և ՀՕԿ-ը իր հիմնադրումից կարճ ժամանակ անց հիմնականում դարձավ երկրի հետ սփյուռքահայ աշխատավորությանը շաղկապող օղակներից մեկը՝ իր գործունեությունը ծավալելով առավելապես արտասահմանյան հայ գաղութներում։

Հնարավորություն չունենալով մի հոդվածում տալու ՀՕԿ-ի ամբողջական պատմությունը, ցանկանում ենք անդրադառնալ նրա գործունեության միայն մի քանի կողմերին։

* * *

ՀՕԿ-ի հիմնադիր ժողովը (որը և առաջին համագումարն է) տեղի է ունեցել 1921 թ. սեպտեմբերի 13-ից 20-ը, Երևանում[3]։ Ժողովը նախաձեռնող խմբակի անունից բացում է ՀՍԽՀ Հողագործության ժողովրդական կոմիսար Արամայիս Երզնկյանը։ Նա իր ելույթում ներկայացնում է քայքայված երկիրը վերականգնելու ուղղությամբ Սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումները և այդ գործում բոլոր ուժերի մոբիլիզացման անհրաժեշտությունը։ Նա նշում է մտավորականության կարևոր դերը կառավարությանն օգնելու և սոցիալիստական հայրենիքի՝ վերածնվող Հայաստանի մասին սփյուռքահայ աշխատավորությանը ճշգրիտ ինֆորմացիա տալու տեսակետից։

Սովետական իշխանությունն ինքնին ձգողական հսկայական ուժ ուներ կապիտալի տիրապետության տակ հեծող միլիոնավոր աշխատավորների համար, սակայն, եթե նկատի ունենանք սկզբնական շրջանում բուրժուական պրոպագանդայի և վարձու գրչակների խլուրդային աշխատանքը՝ սովետների երկրի մասին ամեն տեսակ զրպարտություններ տարածելու տեսակետից, ապա հասկանալի կլինի, թե որքան կարևոր էր մեր երկրի մասին ճշմարտությունը սահմանից այն կողմ հասցնելը։ Այդ նպատակն իրականացնելու համար նախաձեռնող խմբակն առաջարկում է ստեղծել մի անպարտիական, հասարակական կազմակերպություն, որն իր ճյուղերը ունենար ինչպես սովետական

[3] ՀՍՍՌ ՀՈԿՊԱ. ֆ. 178, գ. 249, թ. 21—26։

մյուս ռեսպուբլիկաների հայաբնակ վայրերում, այնպես էլ արտասահմանյան հայ գաղութներում, և որոնց միջոցով երկրից դուրս գտնվող հայ աշխատավորությունը կկարողանար կապվել հայրենիքի հետ[4]։ Նախաձեռնող խմբակի առաջարկության բազմակողմանի քննարկումից հետո, համագումարն ընդունում է կազմակերպության կանոնադրությունը և հատուկ պատվիրակության միջոցով ներկայացնում ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանին՝ կառավարության հավանությունն ստանալու համար։ 1921 թ. սեպտեմբերի 15-ին, Ժողկոմխորհի դեկրետով, հաստատվում է ՀՕԿ-ի կանոնադրությունը[5]։ Համագումարն ընտրում է ՀՕԿ-ի առաջին նախագահությունը (Գլխավոր կամ Կենտրոնական Վարչություն), որի կազմում էին. նախագահ՝ Հովհ. Թումանյան, փոխ-նախագահ՝ Ար. Երզնկյան, քարտուղար՝ Երվ. Թաղիանոսյան, անդամներ՝ Դր. Տեր-Սիմոնյան, Գր. Վարդանյան, Սիմ. Փիրումյան և ուրիշներ։

ՀՕԿ-ի համագումարը մի դեկլարացիայով դիմեց սփյուռքահայ աշխատավոր լայն զանգվածներին, կոչ անելով համախմբվել սոցիալիստական հայրենիքի շուրջը և ամեն կերպ ամրապնդել կապերը նրա հետ։

Խիստ ուշագրավ է 1921 թ. հոկտեմբերի 16-ին ՀՕԿ-ի նախագահության հրատարակած միօրյա հատուկ թերթիկում Հովհ. Թումանյանի «ՀՕԿ-երի առիթով» հոդվածը, որտեղ նա, ընդգծելով ՀՕԿ-ի հիմնադրման կարևոր նշանակությունը, գրում է. «...դարերից ի վեր առաջին անգամն է մեր կյանքում, որ էս տեսակ մի մարմին հաստատվում է իր սեփական պետության դեկրետով և իրավունք ունի ազատ շարժվելու իր երկրում»[7]։

ՀՕԿ-ի հիմնադիր համագումարից անմիջապես հետո ստեղծվում են նրա տեղական մասնաճյուղերը՝ Թիֆլիսում (1921 թ. հոկտեմբեր), Բաթումում (1921 թ. նոյեմբեր), Մոսկվայում և Բաքվում (1922 թ. փետրվար)։ ՀՕԿ-ի մասնաճյուղեր են կազմակերպվում հատկապես նրա երրորդ համագումարից (1923 թ. հոկտեմբեր) հետո՝ Աստրախանում, Խարկովում, Կիևում, Օդեսայում, Ցարիցինում և Հյուսիսային Կովկասի ու Միջին Ասիայի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում։

Արտասահմանում ՀՕԿ-ի մասնաճյուղեր հիմնադրելու և գաղութահայ աշխատավորների կողմից երկրին օգնություն կազմակերպելու տեսակետից մեծ նշանակություն ունեցավ Հովհ. Թումանյանի և Երվ. Թաղիանոսյանի 1921 թ. նոյեմբերին որպես ՀՕԿ-ի պատվիրակներ Կ. Պոլիս կատարած ուղևորությունը։ Նրանց նպատակն էր, ինչպես գրում է Հովհ. Թումանյանը՝ «...մեր Կոմիտեին համանման մի մարմին ստեղծել Պոլսում, կապվել մերինի հետ, և նրա հետ միասին ազդել ավելի հեռու մեր գաղութների վրա, առաջ բերելու նույն տեսակի մարմիններ»[8]։ Նրանք Պոլսում գտնում են արդեն գոյություն

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, թ. 46։

[6] Տարբեր ժամանակներում ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներ են եղել նաև Սարգիս Խանոյանը (ՀՕԿ-ի նախագահ 1931 թ.), Ցոլակ Խանդաղյանը, Կարեն Միրայելյանը, Ալեքսանդր Բակունցը, Նարեկան Տեր-Դավթյանը, Հարություն Սուրխաթյանը, Միրայել Մանվելյանը, Թադևոս Ավդալբեկյանը, Արսեն Նասյանը (ՀՕԿ-ի նախագահ 1935—37 թթ.), Գեղամ Անտելեպյանը, Ալեքսանդր Թամանյանը, Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Պապոյանը, Արամ Մանուչարյանը (ՀՕԿ-ի նախագահ, 1937 թ.) և ուրիշներ։

[7] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 178, գ. 1239, թ. 1—2։

[8] Նույն տեղում, գ. 393, թ. 13։

ունեցող մի այդպիսի օրգան՝ «Հայրենիքի Օգնության Մարմինը»։ Երբ Հովհ. Թումանյանի գլխավորած պատվիրակությունը Կ. Պոլիս է հասնում, ՀՕՄ-ը գտնվում էր երերուն վիճակի մեջ և փաստորեն անգործության էր մատնված դաշնակների հակասովետական պրոպագանդայի հետևանքով։ Պատվիրակությունը կարճ ժամանակամիջոցում պոլսահայությանը ծանոթացնում է երկրի իսկական դրության ու կառավարության ճիշտ քաղաքականության հետ և բեկում առաջ բերում նրանց՝ դեպի Սովետական Հայաստանն ունեցած տրամադրությունների մեջ։ Պատվիրակությանը հաջողվում է նաև ՀՕԿ-ի կողմից ՀՕՄ-ին հանաչելու շնորհիվ ամրապնդել վերջինիս դիրքերը։ Սակայն հատկապես 1924 թ. սկզբներին միայն գաղութահայությունը վճռական շրջադարձ է կատարում դեպի Սովետական Հայաստան։ Այդ շրջադարձի համար որոշող նշանակություն ունեցան երկրում Սովետական իշխանության ձեռք բերած լուրջ հաջողությունները, ինչպես նաև սփյուռքահայության՝ արևմտյան տերությունների հետ կապված ակնկալությունների խորտակումը Լոզանի կոնֆերանսում։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ հենց սկզբից գաղութահայ ունևոր խավերը, ինչպես և պետք էր սպասել, բացահայտ թշնամական դիրք բռնեցին «պոլշևիկյան» Հայաստանի նկատմամբ և նրան համակրող կազմակերպություններ ստեղծելու խնդրում։ Հակառակ դրան՝ սփյուռքահայ աշխատավորական լայն զանգվածները բուռն ակտիվություն ցուցաբերեցին հայրենիքի նկատմամբ։ Հունաստանի հայ աշխատավորներն արտասահմանում առաջիններից մեկը՝ ստեղծեցին ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղեր (ապրիլ, 1924 թ.) և չնայած իրենց քաղաքական անբարենպաստ կացությանն ու տնտեսական սուղ պայմաններին. զգալի միջոցներ տրամադրեցին ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչությանը[9]։ 1925 թ. սկզբներից արդեն ՀՕԿ-ը Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Բալկանյան ու Մերձավոր Արևելքի երկրներում և այլուր լայնորեն տարածեց իր մասնաճյուղերը[10]։

Հայաստանի Օգնության Կոմիտեն իր 16-ամյա գոյության ընթացքում անցել է գործունեության երեք հիմնական էտապ։ Առաջին էտապն ընդգրկում է 1921—1923 թվերը, երբ գլխավոր ուշադրությունը կենտրոնացված էր կարիքավոր բնակչության համար պարեն, հագուստեղեն, դեղորայք և այլ անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու ու բաշխելու վրա։

ՀՕԿ-ը իր գործունեության երկրորդ էտապում (1923—31 թթ.) հիմնականում զբաղված էր արտասահմանյան հայ գաղութների աշխատավորներին իր շուրջը համախմբելու հարցով, իսկ երկրի ներսում՝ շինարարական ու մշակութային կարևոր ձեռնարկումների իրականացմամբ։ Եռանդուն գործունեություն ծավալելու շնորհիվ արդեն 30-ական թվականների սկզբներին ՀՕԿ-ը արտասահմանում ուներ 200-ից ավելի կազմակերպություններ, ավելի քան 10.000 անդամներով[11]։ Այս էտապում ՀՕԿ-ի Գլխավոր Վարչության կողմից արտասահման են մեկնել մի շարք պատվիրակություններ ու անհատ գործիչներ։ Պրոպագանդայի համար օգտագործվել են գրականությունը, կինոն, հայ գաղութներում կազմակերպվել են Հայաստանի տնտեսական նվաճումների ու մշակույթի շրջիկ ցուցահանդեսներ, հրատարակվել են զանազան գեղարվես-

[9] «Հրավիրակ», ամսագիր, օրգան ՀՕԿ-ի Կենտվարչության, Երևան, 1925, հուլիս, № 1, էջ 18։

[10] «ՀՕԿ-ի Տեղեկատու», ամսագիր, օրգան ՀՕԿ-ի Կենտվարչության, Երևան, 1928, № 1, էջ 56—60։

[11] «ՀՕԿ», ամսագիր, օրգան արտասահմանյան ՀՕԿ-երի, Փարիզ, 1935, № 12, էջ 583։

տական ալբոմներ, բացիկներ (Հայաստանի արդյունաբերական ու շինարարական կառույցների, տեսարժան վայրերի պատկերներով), պարբերականներ և այլն, որոնց շնորհիվ հայրենիքի մասին Սփյուռքում ստեղծվում էր ճիշտ պատկերացում։ Բնութագրելով ՀՕԿ-ի դերը, Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ս. Մ. Տեր-Գաբրիելյանը նշել է. «ՀՕԿ-ը հանդիսանում է գաղութահայության մեջ Խորհրդային Հայաստանի ամենաջերմ բարեկամը և նրա տնտեսական, քաղաքական, կուլտուրական վերելքի ու բարգավաճման մասին զրեթե առաջին և միակ տեղեկատու հասարակական կազմակերպությունը։

ՀՕԿ-երը եղել են և են Խորհ. Հայաստանի և գաղութահայության շաղկապը։

... Այսօր ՀՕԿ-երն են,... որ նրանց (խոսքը սփյուռքահայ աշխատավորների մասին է — Հ. Ս.) բերում կանգնեցնում են մեր սոցիալիստական Հայրենիքի կողքին»[12]։

Երրորդ էտապը սկսվում է 1931 թ., երբ լայն հնարավորություններ են ստեղծվում ներդաղթ կազմակերպելու համար։ Ներդաղթի իրականացման գործում ՀՕԿ-ի Գլխավոր Վարչությունն ու նրա մասնաճյուղերն ունեցել են իրենց գործոն մասնակցությունը։

ՀՕԿ-ի Գլխավոր Վարչությունը իր միջոցներով աջակցություն էր ցույց տալիս Ղամարլուի, Դավալուի և Բասարգեչարի շրջաններում տեղավորված գաղթականությանը, տալով հագուստեղեն, հացահատիկ, վառելափայտ, շինանյութ և այլն։ Միջագետքից Բասարգեչարի շրջանը տեղափոխված գաղթականներին, որոնք զուրկ էին նույնիսկ կենսական ամենաանհրաժեշտ միջոցներից, 1922 թ. վերջերին ՀՕԿ-ը հատկացրել է մեծ քանակությամբ շինափայտ, վառելիք և 12.000 փութ ալյուր ու ցորեն[13]։ ՀՕԿ-ն իր վրա էր վերցրել Աշտարակի, Կոշի, Օշականի և մի քանի ուրիշ գյուղերի դպրոցների շեֆությունը. օժանդակում էր նրանց շենքերի վերանորոգմանը և պարբերաբար մատակարարում ալյուր, հագուստեղեն, կոշկեղեն ու գրենական պիտույքներ[14]։ Նյութապես օգնում էր նաև Ալեքսանդրապոլի, Աշտարակի և Օշականի որբանոցներին[15]։

ՀՕԿ-ի Գլխավոր Վարչության առողջապահական բաժինը զգալի դեր էր կատարում բնակչության բժշկական սպասարկման գործում։ Նա հսկայական քանակությամբ դեղորայք է տրամադրել մալարիայով տառապող շրջանների բնակչությանը, պայքար է ծավալել ամենուրեք տարածված տարափոխիկ հիվանդությունների դեմ։ 1923 թ. ամռանը առողջապահական բաժինը իր միջոցներով պահում էր չորս շրջիկ բուժ. կայաններ, որոնց վրա ծախսել է 7000 ռ. ոսկով[16]։

ՀՕԿ-ի գործունեության մեջ վճռական բեկում մտցրեց նրա երրորդ համագումարը, որը տեղի ունեցավ Երևանում 1923 թ. հոկտեմբերի 14—19-ը։ Համագումարի աշխատանքներին մասնակցում էին 40 պատգամավորներ, այդ թվում՝ Ֆրանսիայից, Գերմանիայից, Շվեյցարիայից, Եգիպտոսից, Անգլիա-

[12] ՀՍՍՌ ՀՊԿՊԱ. ֆ. 178, գ. 741, թ. 10։
[13] Նույն տեղում, գ. 31, թ. 29։
[14] Նույն տեղում, գ. 258, թ. 2—3։
[15] Նույն տեղում, գ. 387, թ. 7։
[16] «Հրավիրակ», Երևան, 1923, № 1, էջ 6։

յից, Բելգիայից և Պարսկաստանից եկած ներկայացուցիչներ[17]։ Համբարձումարի բերելով Գլխավոր Վարչության կատարած աշխատանքները անցած երկու տարում և ի նկատի ունենալով բնակչության տնտեսական դրության բարելավումը՝ համագումարը որոշում ընդունեց առաջիկայում լիովին վերջ տալ միջոցների գործադրության սպառողական բնույթին և որդեգրել գործունեության այնպիսի ծրագիր, որի գործադրմամբ մնայուն արժեքներ ստեղծվեին երկրի տնտեսական և կուլտուրական կյանքում։

Այդ մի այնպիսի ժամանակաշրջան էր մեր երկրի կյանքում, երբ արդեն Սովետական Հայաստանը հիմնականում լիկվիդացրել էր տնտեսական դժվարությունները և լիովին ձեռնամուխ եղել ժողովրդական տնտեսության վերականգնման ու կուլտուրական վերափոխության ծավալուն շինարարության։ Ահա այդ գործում Սովետական կառավարությանը որոշ չափով օգնած լինելու նպատակով էլ ՀՕԿ-ի համագումարը նշեց նրա գործունեության նոր ուղիները։ Համագումարի դիրեկտիվների համաձայն ՀՕԿ-ի Գլխավոր Վարչությունը լուրջ օգնություն ցույց տվեց Հողժողկոմատին Արարատյան դաշտի ճահիճների չորացման, ղոերի ոռոգման և ջրանցքների կառուցման միջոցով նոր հողերի յուրացման ուղղությամբ կատարվող աշխատանքներում։ Դա հնարավորություն տվեց կարճ ժամանակամիջոցում հողով ապահովել ղգալի թվով սակավահող գյուղացիների և ներգաղթողների[18]։

ՀՕԿ-ի եկամուտները, որոնց շնորհիվ նա կատարում էր իր առջև դրված խնդիրները, հիմնականում գոյանում էին անդամավճարներից, հրատարակություններից, նվիրատվություններից և այլ աղբյուրներից։ ՀՕԿ-ն իր միջոցներից օգնություն էր ցույց տալիս երկրի առանձին գավառներին, հիմնարկություններին և կարիքավոր քաղաքացիներին։ ՀՕԿ-ի Գլխավոր Վարչությունն իր գործունեության ընթացքում հաճախ նպաստել է նաև երկրում ծավալված ջրանցքների կառուցման, բնակարանային շինարարության, մշակութային կարևոր ձեռնարկումների և այլ աշխատանքների հաջող իրականացմանը։

* * *

ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության 1936 թ. մայիսի 26-ի որոշմամբ ՍՍՌՄ տերիտորիայում գոյություն ունեցող մասնաճյուղերը ենթարկվում են լիկվիդացիայի[19]։

Այդ ժամանակաշրջանում փոխվել էր նաև ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի դերը։ Նրանք հիմնականում դարձել են սփյուռքահայ աշխատավորության հասարակական կարծիքը դարբնող և նրա ամենաթշվառ մասի շահերն արտահայտող ամենամասսայական կազմակերպությունները։ Այդ ժամանակ Ֆրանսիայում նրանց թիվը հասնում էր 32-ի, ԱՄՆ-ում՝ 45-ի. բազմաթիվ մասնաճյուղեր էին ստեղծվել նաև հայկական այլ գաղթավայրերում։ Արտասահմանում մասնաճյուղեր հիմնադրելու, ինչպես նաև նրանց աշխատանքները ճիշտ ճանապարհով տանելու ուղղությամբ ՀՕԿ-ին մեծ ծառայություններ են մատուցել Ավ. Իսահակյանը, Շիրվանզադեն, Դանուշ Շահվերդյանը, Սիմոն Փիրումյանը, Պողոս Մակինցյանը, Եղիա Չուբարը, Զապել Եսա-

---

[17] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 178, գ. 269, թ. 1—16։
[18] Նույն տեղում, գ. 86, թ. 30։
[19] Նույն տեղում, գ. 313, թ. 8։

յանը, Տիգրան Զավենը, Ալեքսանդր Թամանյանը, Պատրիկ Սելյանը և ուրիշներ։ Հայկական գաղթավայրերում ՀՕԿ-ի դիրքերի ամրապնդման, ինչպես նաև սիյուռքահայ աշխատավորների և հայրենիքի կապերի բարելավման տեսակետից կարևոր նշանակություն են ունեցել նաև ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության կողմից արտասահման գործուղված պատվիրակությունները։

1924 թ. վերջերին արտասահման է մեկնում ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության նախագահ, ՀՍԽՀ Հողժողկոմ Արմ. Երզնկյանը։ Նա լինում է Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Անգլիայում, որտեղ բազմաթիվ հանդիպումներ է ունենում գաղութահայ աշխատավորության հետ, հանդես է գալիս զեկուցումներով ու դասախոսություններով[20]։ Ա. Երզնկյանը արտասահմանում տված իր զեկուցումներում ներկայացնում է Անդրկովկասյան ֆեդերացիայի և Հայաստանի իսկական վիճակը, որի շնորհիվ որոշ չափով ցրվում է հակասովետական հերյուրանքների ու զրպարտությունների հետևանքով ստեղծված անվստահության մթնոլորտը[21]։

Հայաստան վերադառնալուց հետո, 1925 թ. փետրվարի 21-ին, ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության ընդլայնված պլենումում տված իր զեկուցման մեջ Երզնկյանը մանրամասնորեն ներկայացնում է գաղութահայության թշվառ կյանքի տխուր պատկերը և նրա աշխատավորական մասի անվերապահ համակրանքը Սովետական Հայաստանի նկատմամբ։ Երզնկյանը նշում է, որ «...ներկայումս գաղութահայության ամենահիմնական խնդիրները հանդիսանում են դպրությունը և որբերի հարցը», սակայն՝ արտասահմանի բարեգործական հիմնարկությունները փաստորեն զբաղված են գերավաճառությամբ, որբերի ցրումով։ ...Հայ աղջիկները որբանոցներից տարվում են Կանադա, այս ու այն անհատին ընծայարկելու կամ էլ զասի «պատվավոր ընտանիքների» մեջ բաժանելու։ Իսկ ինչ կլինի դրանց վախճանը, հայտնի է։ Երբ ես Փարիզ էի, 900 երեխա բերվեցին և զանազան ֆիրմաների բաժանվեցին, որոնք նրանցից վկայականներ վերցրին, թե քաղաքից իրավունք չունեն բացակայելու, թե մի քանի տարի ոոճիկ չպիտի ստանան։ Ահա այդպիսի վերաբերմունք են ցույց տալիս այն «սրբազան» հիմնարկությունները, որոնք զանազան եկեղեցիներում «խեղճ հայության» համար սենտիմներ են հավաքում...»[22]։

Երբ հայ գաղթականների ու որբերի համար զանազան, «բարեգործներ» ուղղակի ողորմություններ էին հայցում, այդ նույն ժամանակ Հայոց Բարեգործական Ընդհանուր Միությունը, որի ցմահ նախագահն էր ոչ անհայտ «ազգասեր» Պողոս Նուբար փաշան, իր ձեռքում էր կենտրոնացրել հենց այդ նույն գաղթականների ու որբերի անունով եղած մի շարք գումարներ և ծախսում էր իր բազմաթիվ դրասենյակների ու պաշտոնյաների վրա։ Բարեգործական Միությունը տարեկան 600.000 ռուբլու եկամուտ ուներ, բայց պահում էր ընդամենը 700 որբ։ Հաշվումները ցույց են տվել, որ միայն 1914—1922 թթ. Բարեգործական ընկերությունները գաղութահայ աշխատավորությունից ստացել են մոտ 10 միլիոն դոլար[23]։ ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի կարևորագույն անելիքներից մեկն էր՝ կեղծ բարեգործներին զրկել այդ գումարներից

[20] ՀՍՍՄ ՀՄԿՊԱ, ֆ. 178, գ. 66, թ. 66—88։
[21] «Խորհրդային Հայաստան», 9 հունվարի, 1925. № 6։
[22] ՀՍՍՄ ՀՄԿՊԱ. ֆ. 178, գ. 66, թ. 66-88։
[23] Նույն տեղում։

և այն ծառայեցնել գաղութահայության կարիքներին։ ՀՕԿ-ը բազմաթիվ առիթներով մերկացնում է Բարեգործական Միությանը, որը սփյուռքահայ մասսաներին խաբելու համար մի քանի ռուբլի էր ուղարկում Հայաստան, իսկ տասնյակ հազարներ շռայլում արտասահմանում։ Այս տեսակետից խիստ ուշագրավ է Բարեգործական Միության Վարչության նախկին անդամ, ՀՕԿ-ի արտասահմանյան լիազոր Ե. Կարիկյանի «Կենտրոնաձիգ և կենտրոնախույս» շահեկան բրոշյուրը, որը ըստ էության մի շառաչուն ապտակ էր Բարեգործականի վարիչներին[24]։ Ե. Կարիկյանը իր այդ ուսումնասիրության մեջ ցույց էր տալիս, որ Բարեգործական Միությունը չորս տարվա ընթացքում, 1921—1924 թթ., արտասահմանում ծախսել է 197.000 անգլիական ոսկի, իսկ Սովետական Հայաստան ուղարկած որբերի համար և այլ նպատակներով՝ ընդամենը 8600 անգլիական ոսկի, «մինչդեռ ամբողջ այդ գումարը անոր անունով հավաքած են»[25]։ Այս մերկացումներն այնքան հեղինակազրկեցին այդ դիմակավոր բարեգործներին, որ նրանք՝ սփյուռքահայ աշխատավորության մեջ իրենց վերջին հենարանը չկորցնելու համար երբեմն ստիպված էին որոշ օգնություն կազմակերպել ներգաղթողներին։

Սովետական Հայաստանի ու սփյուռքահայ աշխատավորների կապերի ամրապնդման և ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեության հետագա աշխուժացման տեսակետից կարևոր դեր խաղաց Գլխավոր Վարչության կողմից 1925 թ. հայկական գաղթավայրերը մեկնած պատվիրակությունը։ Հայաստանի Օգնության Կոմիտեի այդ պատվիրակությունը, որի կազմում էին Գլխավոր Վարչության պատասխանատու քարտուղար Գրիգոր Վարդանյանը, Գլխավոր Վարչության անդամ Կարեն Սիքայելյանը և Կարմիր Խաչի նախագահ բժիշկ Սպանդարատ Կամսարականը, արտասահման մեկնեց 1925 թ. նոյեմբերի 5-ին և վերադարձավ 1926 թ. դեկտեմբերի 1-ին, 13 ամիս մնալով սովետական երկրի սահմաններից դուրս։

Պատվիրակությունը եղավ Գերմանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Շվեյցարիայի, Անգլիայի, Ամերիկայի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում, ծանոթացավ արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությանը, հիմնադրեց ՀՕԿ-ի նոր մասնաճյուղեր։ Պատվիրակության անդամները հանդես եկան Սովետական Հայաստանի նվաճումների և ՀՕԿ-ի անելիքների մասին դասախոսություններով ու զեկուցումներով, ցուցադրեցին Գլխավոր Վարչության միջոցներով Հայկինոյի նկարահանած «Խորհրդային Հայաստան» ֆիլմը։ Պատվիրակությունն իրեն հետ արտասահման էր տարել նաև դիագրամաներ, փարվեստական պատկերազարդ ալբոմներ և այլն, որոնք որոշակի գաղափար էին տալիս Հայաստանի տնտեսական ու մշակութային վերելքի մասին։ Պատվիրակությունը կազմակերպել էր նաև մի փոքրիկ շրջիկ ցուցահանդես։

ՀՕԿ-ի պատվիրակությունը ջերմ ընդունելություն գտավ սփյուռքահայության կողմից։ Պատվիրակության անդամները իրենց շրջագայությունների ընթացքում եղան տարբեր երկրների մոտ 60 քաղաքներում, 121 անգամ ունեցան հրապարակային բանախոսություններ և զեկուցումներ, որոնց ներկա են գտնվել մի քանի տասնյակ հազար հայեր։ Երկու սերիայից բաղկացած «Խորհրդային Հայաստան» դոկումենտալ կինոնկարը, որն ընդգրկում էր երկրի

[24] Նույն տեղում, ց. 305, թ. 84։
[25] Նույն տեղում ց. 392, թ. 42։

բազմաբովանդակ կյանքը, մեծ հաջողություն ունեցավ։ Այդ կինոնկարը կարճ ժամանակամիջոցում դիտել են ավելի քան 50.000 հայեր, և ամեն անգամ, երբ դահլիճում մարում էր լույսը, և էկրանի վրա խավարի միջից երևում էր Սովետական Հայաստանի գերբը, հայրենակարոտ հուզված սրտերը հրճվանքի գլուխգույն հաճույք էին ապրում և օվացիա սարքում ի պատիվ սոցիալիզմի երկրի։ Այդ կինոնկարի գործած ազդեցությունը այնքան ուժեղ էր գաղութահայության վրա, որ դաշնակները մի շարք երկրներում դիմում են տեղական իշխանություններին և խնդրում արգելել նրա ցուցադրումը։

Պատվիրակության ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ ամրապնդվում են ՀՕԿ-ի մասնաճյուղերը, կազմակերպվում նորերը։ ՀՕԿ-ի շուրջն են համախմբվում հատկապես աշխատավորական տարրերը, որի հետևանքով էլ այն դառնում է սովետական օրիենտացիայով սփյուռքահայ մասսաների անպարտիական, ամենամասսայական կազմակերպությունը։

Պատվիրակությունը ծանոթանում է մի քանի տասնյակի հասնող հայկական կտակների, նվիրատվությունների և այլ ազգային գումարների վիճակին[26]։ ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր «Կտակների ուսումնասիրության հանձնաժողովի» և պատվիրակության հավաքած նյութերի հիման վրա ՀՕԿ-ը 1928 թ. Մոսկվայում հրատարակեց պատվիրակության անդամ Կարեն Միքայելյանի «Հայ ժողովրդական հարստությունները արտասահմանում» գիրքը, որը մեծ իրարանցում առաջացրեց գաղութահայ «բարեգործական» շրջաններում։ Այդ գրքի շնորհիվ սփյուռքահայությունը հնարավորություն ունեցավ ճանաչելու իր «բարեկամներին», որոնք տարիներ շարունակ հայ ժողովրդից թաքցրած էին պահում իրականում նրան պատկանող ազգային գումարները։ 1928 թ. ամռանը ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության կողմից մի նոր պատվիրակություն (Գրիգոր Վարդանյան և Երամայիս Մուսայելյան) մեկնեց արտասահման, որը շուրջ մեկ տարվա ընթացքում եղավ Եվրոպայի և Ամերիկայի մի շարք երկրներում, ծանոթացավ ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությանը ու սփյուռքահայ աշխատավորության դրությանը[27]։ Պատվիրակության անդամները իրենց զեկուցումներով և դասախոսություններով սփյուռքահայությանը ներկայացրին երկրի կյանքը, լուսանկարների և այլ ցուցադրական նյութերի միջոցով պատկերացում տվեցին Լենինականի վերաշինության մասին։ Պատվիրակությունն իր հետ էր տարել նաև «Խորհրդային Հայաստանն այսօր» դոկումենտալ նոր ֆիլմը։ Այդ նույն ժամանակներում Ամերիկայում և այլ երկրներում ցուցադրվում էին Հայաստանի Պետլուսկինոյի արտադրած «Նամուս» և «Չար ոգին» գեղարվեստական կինոնկարները, որոնք մեծ հաջողություն ունեցան[28]։

ՀՕԿ-ի այս պատվիրակությունները, ինչպես նաև Հայաստանի ղեկավար գործիչների ու մտավորականների արտասահմանյան ուղևորությունները, պրոպագանդայի բազմազան միջոցները, արդեն 20-ական թվականների վերջերին մեծապես ուժեղացրին ՀՕԿ-ի դիրքերը գաղութահայ այլ կազմակերպությունների համեմատությամբ։

---

[26] Տես՝ ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 178, գ. 298, թ. 10—14 (ՀՕԿ-ի Գլխավոր Վարչության 1926 թ. դեկտեմբերի 31-ի նիստում պատվիրակության տված հաշվետվությունը), նաև «Խորհրդային Հայաստան», 21 դեկտեմբերի, 1925, № 291։

[27] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 178, գ. 463, թ. 7—10։

[28] Նույն տեղում, գ. 432, թ. 6։

* * *

Մեծ են ՀՕԿ-ի ծառայությունները ներգաղթի կազմակերպման գործում։ Եթե նկատի ունենանք Սովետական իշխանության առաջին տարիներին Հայաստանի տնտեսական ծանր վիճակը, երբ մոլեգնում էին համատարած սովն ու համաճարակները, երբ հարյուր հազարավոր գաղթականներ, որբեր ու անապաստան երեխաներ թափառում էին երկրում, երբ գեռ հազարավոր գործազուրկներ կային Հայաստանում, ապա անվերապահորեն կարելի է ասել, որ այն, ինչ կատարված է Սովետական կառավարության կողմից ներգաղթի ուղղությամբ, հանդիսանում է հայ ժողովրդի նկատմամբ Կոմունիստական պարտիայի հոգատարության և լենինյան ազգային քաղաքականության վառ դրսևորումը։ Ներգաղթը նյութական ահագին միջոցներ պահանջող խնդիր էր։ Միայն Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության և ինտելիգենցիայի կատարած զոհողությունների շնորհիվ Սովետական կառավարությունը հնարավորություն ունեցավ իր գոյության դեռևս սկզբնական շրջանում իրականացնել սփյուռքահայ մեծ թվով աշխատավորների ցանկությունները և կազմակերպել նրանց հայրենադարձությունը։ Հայաստանի տնտեսական վերելքին զուգընթաց 1921—27 թթ.[29] Սովետական կառավարությունն արտասահմանից ընդունեց մոտավորապես 25.000 հայեր՝ հոգալով նրանց փոխադրության, բնակարանների կառուցման, երկրագործական գործիքների, սերմացուի և մի քանի ամսվա ապրուստի ծախսերը[30]։

30-ական թվականների սկզբներին, երբ սովետական ամբողջ երկիրը, այդ թվում և Սովետական Հայաստանը, տնտեսական աննախընթաց վերելք էր ապրում, կապիտալիստական աշխարհը, ընդհակառակը՝ ընկել էր համընդհանուր ճգնաժամի մեջ, որի հետևանքով տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններ էին ստեղծվել նաև գաղութահայ աշխատավորության համար։ Օրեցօր ուժեղանում էր սփյուռքահայության տնտեսական քայքայումը, քաղաքական իրավազրկությունը և հալածական վիճակը։ Այսպիսի պայմաններում Սովետական կառավարությունը, որպես աշխատավորության շահերի իսկական պաշտպան, մեծ չափերի հասնող ներգաղթ կազմակերպեց։ Հենց միայն 1932—1933 թթ., ոչ լրիվ տվյալներով, Հայաստան ներգաղթեցին մոտավորապես 9000 հայ աշխատավորներ[31]։ Հայաստանի Օգնության Կոմիտեն այս գործում իր կարևոր ավանդը ներդրեց՝ ստեղծելով համագաղութային մասշտաբով «Ներգաղթի և բնակարանային շինության ֆոնդ», որի կենտրոնական մարմնի նախագահն էր Ավետիք Ռսահակյանը։ «Ներգաղթի և բնակարանային շինության ֆոնդ»-ում հավաքած ամբողջ գումարը ՀՕԿ-ի միջոցով հատկացվեց ներգաղթի կազմակերպմանը։

1935 թ. նոյեմբերին ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության կազմած մի զեկուցագրում նշված է, որ «մինչև այսօր խորհրդային կառավարության կողմից

---

[29] 1921 թ. տեղի ունեցած ներգաղթի և ընդհանրապես գաղթականական շարժման մասին տվյալներ չեն պահպանվել, չնայած դրան, հայտնի է, որ փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացիայի օրերին, դաշնակների պրովոկացիաների հետևանքով Պարսկաստան ապաստանած մոտ մեկ տասնյակ հազար փախստականների վերադարձն է կազմակերպվել։ 1926 թ. Լենինականի երկրաշարժի պատճառով հնարավոր չի եղել ներգաղթ կատարել։ Այսպիսով, 25,000 հոգի ներգաղթել են միայն հինգ տարվա ընթացքում։

[30] Տես «Երևան», երկօրյա թերթ, Փարիզ, 1928, 8 հունիսի, № 376։

[31] «ՀՕԿ», Փարիզ, 1933, № 10, էջ 56։

կազմակերպված բարավաններով Հայաստան են ներգաղթել ավելի քան 40.000 աշխատավորներ», որոնք տարիներ շարունակ անտուն ու անտեր դեղերում էին կապիտալիստական զանազան երկրներում և միայն սոցիալիստական կարգերի շնորհիվ հնարավորություն ստացան վերադառնալու իրենց հայրենիքը, որպես նրա հարազատ զավակները[32]։ Ներգաղթի հետ կապված կազմակերպական ամբողջ աշխատանքը արտասահմանում կատարում էին ՀՕԿ-ի մասնաճյուղերը և նրա Կենտրոնական Վարչությունը։

Սովետական Հայաստանի կառավարությունը և ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչությունը բազմաթիվ դիմումներ էին ստանում արտասահմանում գոյություն ունեցող հայկական Հայրենակցական և Վերաշինաց միություններից՝ Հայաստանում նոր ավաններ հիմնադրելու ցանկությամբ։ Հայրենակցական և Վերաշինաց միությունները, որոնց թիվը հասնում էր մի քանի տասնյակի և կրում էին Արևմտյան Հայաստանի այս կամ այն քաղաքի, գավառի անունները, նպատակ ունեին նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալ իրենց նախկին հայրենակիցներին։ Այդ նպատակի իրականացման լավագույն արտահայտությունը կլիներ ստեղծված նոր պայմաններում ամեն կերպ զորավիգ լինել Սովետական Հայաստանին և նպաստել տարագիր հայ աշխատավորության հայրենադարձությանը։ Բայց Սովետական Հայաստանի երդվյալ թշնամիներն ամեն կերպ ձգտում էին խանգարել Հայրենակցական և Վերաշինաց միությունների այդ ճիշտ ուղիով ընթանալու փորձերը։ Նրանք գտնում էին, որ ավելի լավ է արաբական անապատներում փոշիացնել Հայրենակցական միությունների միջոցները, քան թե Սովետական Հայաստանում մի տուն կառուցել ներգաղթողների համար։ Ամերիկայի «Հաճընցիների Հայրենակցական Միության» ղեկավարները դաշնակների թելադրանքով որոշում էին կայացրել Սիրիայում կառուցել «Նոր Հաճըն» անունով քաղաք և այնտեղ հավաքել բոլոր նախկին հաճընցիներին[33]։ Հենց իրենց՝ հաճընցի աշխատավորների միահամուռ բողոքների հետևանքով չիրականացվեց այդ հայրենադավ որոշումը[34]։

Ահա այս ժամանակ էլ տեղի ունեցավ Հայրենակցական Միությունների շրջադարձը դեպի Սովետական Հայաստան, որի քարտեզի վրա հետագայում առաջացան պատմական Հայաստանի մի քանի քաղաքների ու ավանների «նոր» մասնիկի կցումով անունները։ Այդ ուղիով ընթանալու հայրենասիրական աննախընթաց օրինակը տվեց Ամերիկայի «Արարկիրցիների Հայրենակցական Միությունը»։ «Արարկիրցիների Հայրենակցական Միության» դիմումը հարգվեց Սովետական կառավարության կողմից և նրան թույլատրվեց Երևանի մոտ, դեպի Քանաքեռ տանող խճուղու ձախ կողմում, կառուցել «Նոր Արարկիր» ավանը, որտեղ պիտի հավաքվեին բոլոր արարկիրցիները։ «Նոր Արարկիրը» մեծ հանդիսավորությամբ հիմնադրվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման 5-րդ տարեդարձի օրը՝ 1925 թ. նոյեմբերի 29-ին։ Հիմնադրման հանդեսին ներկա էին և ջերմ ելույթներ ունեցան Հայկենտգործկոմի նախագահ Արտ. Կարինյանը, Վրաստանի Կենտգործկոմի քարտուղար Թոդրիան, ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության անդամ Նսայի Կարիկյանը և ուրիշներ։ Այնուհետև Անդրկովկասի Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ս. Սրա-

[32] ՏԵՍ՝ ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 178, գ. 678, թ. 2—11։

[33] «ՀՕԿ-ի տեղեկատու», Երևան, 1928, № 1, էջ 13—14։

[34] Նույն տեղում։

պիոնյանը (Լուկաշին), ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Սաքո Համբարձումյանը, Արտ. Կարինյանը, Երևանի գավգործկոմի նախագահ Արամ Կոստանյանը և «Արարկիրցիների Հայրենակցական Միության» ներկայացուցիչներ Ղազիկյանը և Սարյանը շարում են ավանի առաջին տան հիմնաքարերը. Շենքի հիմքում դրվում է մի արծաթյա հուշատախտակ, որի վրա փորագրված էր ՀՍԽՀ Պետական զերը, հիմնադրման թվականը և հիմնադիրների անունները[35]։

1928 թ. վերջերին Նոր Արաբկիրում արդեն կառուցվել էր 51 տուն, ուր ապրում էին 762 հին արարկիրցիներ։ Ավանն ուներ մանածագործարան, պղնձագործների, դերձակների, կոշկակարների, գուլպայագործների արտելներ, դպրոց, ակումբ, դրադարան, մանկապարտեզ և այլն[36]։ Թե որքան արագ վերելք էր ապրում Նոր Արարկիրը, բավական է ասել, որ նրա արդյունաբերական ձեռնարկությունները միայն 1932 թ. տվել են 2 միլիոն երկու հարյուր հազար ռուբլու արտադրանք[37]։ Այդ գումարը գերազանցում էր դաշնակների ժամանակվա Հայաստանի ամբողջ արդյունաբերության 1919 թ. արտադրանքը, որը 1926—27 թթ. անփոփոխ գներով կազմում էր ընդամենը 1.687.700 ռուբլի[38]։

Ավելի ուշ Հայրենակցական Միությունների կողմից, Սովետական Հայաստանում հիմնադրվում են նաև մի քանի այլ ավաններ, որոնց կարևոր օգնություն է ցույց տալիս ՀՕԿ-ը[39]։

* * *

Սովետական Հայաստանի մասին սփյուռքահայությանը ճիշտ գաղափար տալու և բուրժուական-ազգայնական պարտիաների դեմ պայքարելու տեսակետից կարևոր դեր են կատարել ՀՕԿ-ի պարբերականներն ու այլ հրատարակությունները։ ՀՕԿ-ի Գլխավոր Վարչության առաջին պարբերականը «Հրավիրակ» ամսագիրն էր, որը լույս է տեսնում 1925—26 թթ.։ Ընդառաջելով արտասահմանյան մասնաճյուղերի և սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին՝ ՀՕԿ-ի Գլխավոր Վարչությունը 1928 թ. հրատարակում է «ՀՕԿ-ի տեղեկատու» ամսագիրը։ Տարբեր ժամանակներում մի քանի պարբերականներ են լույս ընծայել ՀՕԿ-ի Թիֆլիսի («Օգնիր Հայաստանին» և «Հայրենաշեն» թերթերը) և Մոսկվայի («Вестник Комитета Помощи Армении», «Լրաբեր» և «Возрождающаяся Армения» պարբերականները) մասնաճյուղերը։ Իրենց տպագիր օրգաններն ունեին նաև ՀՕԿ-ի Ամերիկայի Կենտրոնական Վարչությունը («Շինարար» անունով հանդեսը, լույս էր տեսնում 1927 թ. սկսած), Եգիպտոսի մասնաճյուղը («ՀՕԿ» ամսագիրը)։ ՀՕԿ-ի Ֆրանսիայի Կենտրոնական Վարչությունը 1933—1935 թթ. Փարիզում հրատարակում էր «ՀՕԿ» ամսագիրը, որպես ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի օրգան։

Սովետական Հայաստանի ու սփյուռքահայության կյանքը և ՀՕԿ-ի գործունեությունը մանրամասնորեն լուսաբանում էր 1925—30 թթ. Փարիզում լույս տեսնող «Երևան» թերթը։ ՀՕԿ-ի այդ բոլոր օրգանները նպաստում էին նրա մասնաճյուղերի գործունեության հաջող ծավալմանը, Սովետական Հայաստա-

[35] «Խորհրդային Հայաստան», Երևան, 1925, 1 դեկտեմբերի, № 273։

[36] «Երևան», երկրորդ թերթ, Փարիզ, 17 դեկտեմբերի, 1929, № 468։

[37] «ՀՕԿ», Փարիզ, 1933, № 3, էջ 44։

[38] «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Ժողովածու, Երևան, 1935, էջ 4 և 63։

[39] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 178, ց. 678, թ. 2—11։

նի համակիրների աջմանն ու հայրենիքի հետ նրանց կապերի ամրապնդմանը։

1925 թ. սկզբներին ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչությունը հիմնել էր գեղարվեստական հրատարակչության հատուկ բաժին, որը հրատարակում էր ինչպես ՀՕԿ-ի պարբերական օրգանները, այնպես էլ առանձին գրքեր, բարեղներ, նկարներ, ալբոմներ, Հայաստանի տեսարժան վայրերի պատկերներով բացիկներ և այլն[40]։ ՀՕԿ-ը հրատարակել է Հովհ. Հակոբյանի «Խորհրդային Հայաստան», Զապել Եսայանի «Պրոմեթեոս ազատագրված», Վահան Թոթովենցի «Նոր Բուզանդիոն», Ակսել Բակունցի «Հովնաթան մարշ» երկերը, Տիգրան Բուդաղյանի «Սպիտակ ածուխը Խորհրդային Հայաստանում», Պողոս Աբելյանի «Խորհրդային Հայաստանի վերելքը թվերով», Լեոյի «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» և այլ ուշագրավ ուսումնասիրություններ։

Այս հրատարակությունների միջոցով ՀՕԿ-ը նպատակ ուներ աշխարհի չորս կողմ ցրված հայրենակիցներին բազմակողմանի և ճիշտ գաղափար տալ Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական շինարարության մասին և միշտ վառ պահել նրանց մեջ սերը հայրենի բնաշխարհի նկատմամբ։

ՀՕԿ-ի Գլխավոր Վարչությունը նպաստել է նաև սովետահայ երաժշտական ու թատերական կուլտուրայի զարգացմանը։

* * *

Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունն ազգայնական պարտիաների և հատկապես դաշնակցության կատաղի թշնամանքն էր առաջացնում նրա նկատմամբ։ Բազմաթիվ փաստեր կան դաշնակների կողմից ՀՕԿ-ի մասնաճյուղերի ու անդամների նկատմամբ կատարված մատնությունների, գրպարտությունների և սպանությունների մասին։ Դեռևս 1921 թ. վերջին, երբ նոր էր հիմնադրվել ՀՕԿ-ը, Կ. Պոլսի դաշնակների օրգան «Ճակատամարտ» թերթը պրովոկացիոն լուրեր էր տարածում այն մասին, թե իբր նրա հիմնադիր անդամները «Չեկայի սպառնալիքների տակ են ստորագրել և անդամագրվել կոմիտեին...»[41]։ ՀՕՄ-ը, հենց այս պրովոկացիաների ազդեցության տակ, իր օգնությունը սկզբում Հայաստան էր ուղարկում ոչ թե ուղղակի ՀՕԿ-ի Գլխավոր Վարչության անունով, այլ Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտեի միջոցով[42]։

ՀՕԿ-ի դեմ դաշնակցության մղած պայքարում ակտիվ դեր էին կատարում դիվանագետի ծիրանի հագած Ավետիս Ահարոնյանն ու Ալեքսանդր Խատիսյանը, դաշնակների վերջին նախարարապետ Սիմոն Վրացյանն ու գերմանոֆիլ Արշակ Չամալյանը։

Երևանի լալկան Ավ. Ահարոնյանը խիստ «խրոխտ» կեցվածք էր ընդունում, երբ բեմ էր ելնում իր սովորական դարձած գրպարտություններով՝ Սովետական Հայաստանի և ՀՕԿ-ի դերը նսեմացնելու համար[43]։ ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերն իրենց առաջացման հենց սկզբնական շրջանում արագորեն տարածվում էին շնորհիվ գաղութահայ ժողովրդական լայն զանգվածների՝ դեպի Սովետական Հայաստանը տածած խորը համակրության։ Դաշնակներն զգալով, որ կորցնում են իրենց վերջին հենարանը մասսաների մեջ, ձգտում էին ամեն կերպ խանգարել ՀՕԿ-ի մասնաճյուղերի կազմակերպմանը։

[40] «Հրատիրակ», Երևան, 1925, № 1, էջ 13։
[41] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 178, գ. 6, թ. 5—6։
[42] Նույն տեղում, թ. 24։
[43] «Երևան», Փարիզ, 3 փետրվարի, 1926, № 36։

Դաշնակցության դիվանագիտական խոսափողը՝ Ավ. Ահարոնյանի գլխավորած «Հայաստանի հանրապետության պատվիրակությունն»-ը, առաջ էր քաշում այսպես կոչված «էքստերիտորիալ կառավարություն» կամ «զաղութահայ կենտրոնական վարչություն» կազմելու ցնորամիտ իդեան։ Դա ըստ էության պիտի հանդիսանար զաղութահայության միակ դեկավար օրգանը և ծառայեր դաշնակցության շահերին։ Դաշնակների պարագլուխներից մեկը՝ Նիկոլ Ադուրյանը և նրա համախոհները գտնում էին, որ այդ վարչության համար տերիտորիա անհրաժեշտ չէ, այլ միայն վարչական ապարատ, որտեղ տաքուկ պաշտոններ կունենային Երևանի մինիստր-նախարարները[44]։ Դաշնակների այս բոլոր խարկանքների հիմնական նպատակներից մեկն էր սփյուռքահայությանը հեռու պահել Սովետական Հայաստանին համակիր ՀՕԿ-ի կազմակերպություններից։

Բերենք արտասահմանում ՀՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծմանը դաշնակների խանգարելու բազմաթիվ փաստերից մեկը. 1924 թ. հոկտեմբերի 23-ին Բեռլինի «Հայ ուսանողական միությունը» ժողով է հրավիրում ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղ հիմնելու համար։ Ժողովին ներկա են լինում մոտ 70 հոգի, և, ինչպես նշված է այդ մասին եղած փաստաթղթում, եկել էին նաև Բեռլինի հայ գաղութի «թափառական հերոսները» (խոսքը դաշնակների մասին է — Հ. Մ.), որոնց նպատակն էր խանգարել ՀՕԿ-ի հիմնադրմանը։ Ժողովը տևում է մինչև կեսգիշեր, բայց դաշնակ պարագլուխ Արշակ Ջամալյանի ու նրա ընկերների դիմադրության պատճառով հնարավոր չի լինում գրական արդյունքի հասնել։ Նախաձեռնողները հրավիրում են երկրորդ ժողովը և իրականացնում ՀՕԿ-ի մասնաճյուղի կազմակերպումը[45]։

Դաշնակները իրենց մատնություններով, սպառնալիքներով ու սպանություններով հասան այն բանին, որ տեղական իշխանություններն արգելեցին ՀՕԿ-ի Բեյրութի, Կահիրեի, Ալեքսանդրիայի և Ալժիրի մասնաճյուղերը։ Խիստ զավեշտական է հնչում իրենց «ազգասեր», «հայրենասեր» ու «հեղափոխական» հորջորջող դաշնակների՝ Ալժիրի իշխանությունների մոտ կատարած այն զբաղարտչական մատնությունը, թե իբր ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղի կողմից երկրաշարժից տուժած Լենինականի բնակչության համար հանգանակվող գումարները «կոմունիստական կուսակցության համար են»[46]։

Պայքարի նույն խարդախ մեթոդներին էին դիմում դաշնակները նաև Հարավային Ամերիկայում։ Բուենոս-Այրեսի մասնաճյուղը ՀՕԿ-ի Գլխավոր Վարչությանն ուղարկած իր զեկուցագրերից մեկում այդ մասին հայտնում է հետևյալը. «Հանրածանոթ են այն մատնությունները, որոնք կատարվեցան մեր «Զարենց գրադարանի» վրա, որու բերումով ձերբակալվեցան երեք տասնյակ մը ժողովականներ Պուենոս-Այրեսի մեջ, ժողովրդային վարժարանի և ՀՕԿ-ի գրադարանի վրա՝ Մոնթեվիդեոյի մեջ, ուր բանտ առաջնորդվեցան մեր կարգ մը ընկերներեն ու համակիրներեն։ Հարձակումներև զերծ չեղան Պրազիլի ու Ֆլորեսի մեր ընկերները։ Մանավանդ Ֆլորեսի մեջ մատնիչ սոր արարածները (խոսքը վերաբերում է դաշնակներին — Հ. Մ.) չի վարանեցան ոստիկանատան մեջ հայտարարել իրենց ֆաշիստ ըլլալը և նույնիսկ եկեղեցական քաղաքացիներին զրպարտել իբրև հեղափոխական, հակակառավարականներ»[47]։

[44] ՀՍՍՌ ՀԻԿՊԱ, ֆ. 178, գ. 66, թ. 66—88։
[45] Նույն տեղում, գ. 269, թ. 18։
[46] Նույն տեղում, գ. 374, թ. 13—15։
[47] ՀՍՍՌ ՀԻԿՊԱ, ֆ. 178, գ. 741, թ. 8։

Ասենք այլ վարքագիծ չէր էլ կարելի սպասել նրանցից, ովքեր նույնիսկ Նյու-Յորքում հրատարակվող հայ բողոքական պատվերիների օրգան «Հայաստանի կոչնակը» Սիրիայում արգելել տալու համար կառավարությանը հավատացնում էին, թե այդ թերթը «...ծառայում է խորհրդային իշխանության պրոպագանդին»։ Բանն այն էր, որ «Կոչնակը» երբեմն քաղվածքներ էր կատարում Սովետական Հայաստանում կատարվող շինարարական աշխատանքների ու մշակութային նորությունների վերաբերյալ[18]։ Զգալով, որ Սովետական Հայաստանի մասին սփյուռքահայությանը հասնող ամեն մի ճշմարիտ փաստ մի կործանիչ հարված է իրենց համար, դաշնակները ՀՅԿ-ը տեղական իշխանությունների մոտ ներկայացնում էին որպես «համայնավար» կազմակերպություն, իսկ նրա անդամներին՝ որպես «պոլշևիկներ», արգելել էին տալիս Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումների մասին պատմող գրականության, մամուլի տարածումը և կինոֆիլմերի ցուցադրումը։

Չնայած այս բոլոր դավերին, արտասահմանում օրեցօր աճում էին ՀՅԿ-ի մասնաճյուղերը, իրենց շուրջը համախմբում սփյուռքահայ կենսունակ տարրերին և դառնում սփյուռքահայ կյանքի աշխուժացման կարևոր ազդակներից մեկը։ Գաղութահայ մասսաների մեջ լայն ժողովրդականություն էին վայելում ՀՅԿ-ի մասնաճյուղերի ստեղծած մշակութային միությունները, գրադարանները, ակումբները, թատերական ու երգի ինքնագործ խմբերը, որոնցից շատերը կրում էին Հայաստանի տեղանունների և ռևոլյուցիոն ականավոր գործիչների ու գրողների անունները։ Այսպիսի ճանապարհով ընթանալով՝ ՀՅԿ-ը սկսեց էական դեր կատարել գաղութահայության ղեկավարման գործում։ Դաշնակները տեսնելով, որ չկարողացան դրսից խանգարել ՀՅԿ-ի գործունեությանը՝ փորձեցին թափանցել արտասահմանյան մասնաճյուղերի ղեկավարության մեջ և իրենց ցանկացած ուղղությունը տալ նրանց, այսինքն՝ ՀՅԿ-ի կազմակերպությունները հակադրել Սովետական Հայաստանին։ Որոշ վայրերում դաշնակներին հաջողվեց հասնել իրենց նենգ նպատակներին։ Այդ վտանգի դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով ՀՅԿ-ի Գլխավոր Վարչությունը 1926 թ. մարտի 24-ին հատուկ որոշում ընդունեց[49]։

Դաշնակները կաշվից դուրս էին գալիս, որպեսզի խանգարեն ՀՅԿ-ի ժողովրդականացմանը հատկապես գաղութահայ կարևորագույն կենտրոններում։ Ս. Վրացյանը՝ Բոստոնում հրատարակվող դաշնակցական «Հայրենիք» թերթում 1925 թ. դեկտեմբերին Ս. Մաստոյան կեղծանունով լույս ընծայած իր մի հոդվածում թունոտ ատելությամբ փորձում էր ապացուցել, թե իբր ՀՅԿ-երը Ամերիկայում ժողովրդականություն չունեն։ Բայց փաստերն այլ բան էին ասում։ Դաշնակները 1925 թ. հոկտեմբերի 25-ին, իրենց 35-ամյակի առթիվ, Նյու-Յորքում հայտարարել էին «դաշնակցության օր», սակայն ավելի քան 10.000 հայություն ունեցող գաղութից հազիվ 300—350 հոգի էին հավաքվել նրանց «ձրի մուտքով» երեկույթին, մինչդեռ ՀՅԿ-ի նույն օրը կազմակերպած հանդեսին, որի մուտքի տոմսերը ի միջի այլոց 1—2 դոլար արժեին, եկել էին ավելի քան 1000 մարդ և հենց տեղում էլ 75 հոգի անդամագրվել ՀՅԿ-ին[50]։

---

[48] «ՀՅԿ», Փարիզ, 1934, № 4, էջ 249։
[49] ՀՍՍՌ ՀՄԿՊԱ, ֆ. 178, գ. 418, թ. 4—5։
[50] «Երևան», Փարիզ, 3 դեկտեմբերի, 1925, № 18։

ՀՕԿ-ի դեմ իրենց կատաղի պայքարում դաշնակները հաճախ դիմում էին նաև տեռորիստական ակտերի։ 1933 թ. Փարիզում ստեղծված «Դաշնակ տեռորի զոհերու պաշտպանության Կենտկոմի»՝ գաղութահայությանն ուղղված կոչերից մեկում նշված է, որ ՀՕԿ-ի շարքերից մոտավորապես 10 տարվա ընթացքում, տասնյակներով զոհեր ընկան դաշնակ տեռորիստների ձեռքով Բեյրութում, Աթենքում, Լիոնում և այլ վայրերում[51]։ 1933 թ. փետրվարի 26-ին Ֆրանսիայում, Վալանսի դեպարտամենտի Գրընոբլ քաղաքում, դաշնակները սպանում են ՀՕԿ-ի լավագույն անդամ Մանուկ Մարուքյանին և վիրավորում 5 ուրիշ անդամների այն բանի համար, որ նրանք ժողովի ժամանակ, հակառակ դաշնակների՝ Սովետական Հայաստանի նկատմամբ կատարած զրպարտությունների, բացականչել են՝ «Կեցցե՞ Խորհրդային Հայաստանը»։ «Դաշնակ տեռորի զոհերի պաշտպանության Կենտկոմը» անդրադառնալով այդ դեպքերին, իր վերոհիշյալ կոչի մեջ գրում էր. «Գրընոբլի զոհ Մարուքյանից հետո զոհվեց Գրլըճյանը Աթենքում։ Ալեքսանդրիո մեջ կը հարվածվի տոքթ. Թաշճյան, մինչ Ամերիկա Գույումճյան հարձակման կենթարկվի եռագույնի (դաշնակների տիրապետության ժամանակվա Հայաստանի դրոշը — Հ. Մ.) դեմ արտահայտված ըլլալու համար»[52]։

Կոչը խորհուրդ էր տալիս տեղերում ստեղծել «դաշնակ տեռորի զոհերու պաշտպանության հանձնախումբ»-եր և միասնական պայքար մղել դաշնակների դեմ, «... որովհետև, միայն ժողովրդական ցասումի հսկա ալիքին առջև է, որ Վրացյանները և Ջամալյանները պիտի մտնեն իրենց որջերը ու պիտի չվրդովեն՝ իրենց քաղաքական արկածախնդիր խաղերով, գաղութահայ հասարակության հանգիստն ու ապագան»[53]։

Ֆաշիզմի առաջացումը միջազգային արենայում մեծ աշխուժություն մտցրեց նաև դաշնակցության գործունեության մեջ՝ ընդդեմ հայկական դեմոկրատական կազմակերպությունների։ Նրանք ամենուրեք ուժեղացրին իրենց պայքարը հատկապես ՀՕԿ-ի դեմ։ Ահա բազմաթիվ փաստերից մեկը. 1934 թ. վերջերին և 1935 թ. սկզբներին դաշնակների կեղծ ամբաստանությունների ու մատնությունների հետևանքով, Ալեքսանդրիայում անգլիական ու եգիպտական իշխանությունների կողմից բանտարկվեցին տեղական ՀՕԿ-ի ղեկավարներն ու բազմաթիվ անդամներ՝ մոտավորապես 80 հոգի։ Նրանց դեմ որպես մեղադրյալ հանդես էր գալիս հակասովետական երդվյալ տարրերից մեկը՝ դաշնակցական «Հուսաբեր» թերթի արտնատեր Օննիկ Մաճառյանը։ Քննության ժամանակ նա հայտարարում է եգիպտական դատախազին, թե «ՀՕԿ-իստները համայն աշխարհի մեջ, ՀՕԿ-ի դիմակին տակ գործող ամենավտանգավոր համայնավորներն են»[54]։

Այսպիսով, միջազգային իրադրության բարդացմանը զուգընթաց, երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին է՛լ ավելի է ուժեղանում ռեակցիան առաջադիմական, սովետական կարգերին համակիր կազմակերպությունների դեմ։ Ամբողջ կապիտալիստական աշխարհում, մասնավորապես Եվրոպայում և Մերձավոր Արևելքի երկրներում, խիստ հալածանքներ են սկսվում նաև ՀՕԿ-ի մասնաճյուղերի և անդամների դեմ։

[51] «ՀՕԿ», Փարիզ 1933, № 8, էջ 56—59։
[52] Նույն տեղում։
[53] Նույն տեղում։
[54] Տես՝ «ՀՕԿ», Փարիզ, 1935, № 2, էջ 68։

ՀՕԿ-ի հիմնադրումից հետո անցած ժամանակամիջոցում մեծագույն փոփոխություններ էին կատարվել Հայաստանի կյանքում։ Դրան համապատասխան փոխվել էր նաև ՀՕԿ-ի գործունեության բնույթը։ Մեր երկրի սոցիալիստական շինարարության ասպարեզում ձեռք բերած համաշխարհային պատմական նվաճումների շնորհիվ վաղուց արդեն դադարել էր Սովետական Հայաստանի համար որևէ նշանակություն ունենալ դրսից ստացվող նյութական օգնությունը։ Այսպիսով ՀՕԿ-ի անունը այլևս չէր համապատասխանում այդ կազմակերպության գործունեությանը։ Նա դարձել էր ավելի շուտ սփյուռքահայ աշխատավորությանը Սովետական Հայաստանի հետ կապող օղակներից մեկը։ Ուրիշ երկրների, ինչպես և սփյուռքահայության հետ փոխադարձ մշակութային և այլ կապեր էին հաստատել նաև «Արտասահմանի հետ կուլտուրական կապի ընկերությունը»՝ և նման այլ կազմակերպություններ, որոնք ՀՕԿ-ի համեմատությամբ շատ ավելի լայն մասշտաբներով էին իրականացնում այդ խնդիրները։ Հետևապես նպատակահարմար չէր «Հայաստանի Օգնության Կոմիտեի» անվան տակ այդ կազմակերպության հետագա գոյությունը։ Ուստի ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1937 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ Հայաստանի Օգնության Կոմիտեն դադարեցրեց իր գործունեությունը[35]։ ՀՕԿ-ի շարքերում համախմբված սովետական օրիենտացիա ունեցող սփյուռքահայ բազմահազար աշխատավորները ճիշտ ըմբռնեցին Սովետական կառավարության այդ որոշման իմաստը և երբեք չթուլացրին իրենց կապերը հայրենիքի հետ։ Նրանք հետագայում ստեղծեցին պրոգրեսիվ նոր կազմակերպություններ և շարունակեցին իրենց պայքարը Սովետական Հայաստանի ու սփյուռքահայ աշխատավորության թշնամիների դեմ։

Այսպիսով Հայաստանի Օգնության Կոմիտեն իր գործունեությամբ որոշակի դրական դեր կատարեց, նպաստելով սոցիալիստական հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորության կապերի ամրապնդմանը։

---

[35] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 178, գ. 939, թ. 2։